

ՌԵՍՊՈՒՐԱՏՆՏԵՍԻՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՄԲՈՆՈՒՄԸ

ՀԱՍՄԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

Սոցիալիստական արտագործության արդյունավետության բարձրացումն անհնար է առանց հասարակության անդամների տրամադրության տակ եղած արտադրական պոտենցիալի ռացիոնալ օգտագործման, ինչպես նաև աշխատանքային, նյութական և ֆինանսական ռեսուրսների խնայողության: Էկոնոմիկայի փոխադրումը զարգացման բազմակողմանի ինտենսիվացման ուղու, ներագույն տեխնիկայի ու տեխնոլոգիական բազայի հիման վրա արտագործության վերակառուցումը և տեխնիկական նորացման իրագործումը սերտորեն կապված են ռեսուրսների արդյունավետ օգտագործման, դրանց խելացի տրամադրման հետ:

Այսօր արտադրական ֆոնդերի, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը կուսակցությունը համարում է վերջնական ժողովրդատնտեսական բարձր արդյունքների ստացման կարևորագույն նախադրյալ, սոցիալիստական հասարակության անդամների բարեկեցության ապահովման ռեալ միջոց: Ռեսուրսների օգտագործման, խնայողության պրոբլեմը շատ սուր է և հրատապ<sup>1</sup>, — ասել է ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովը:

Ժողովրդատնտեսական արդյունավետության տեսանկյունից խնայողությունը հետամտում է աշխատանքային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առավել խելացի ու ռացիոնալ օգտագործման միջոցով հասնել դրանց համընդհանուր տնտեսման: Ռեսուրսատնտեսումը զարգացման առավելապես ինտենսիվ ուղու անցման կարևորագույն պայման է: Հետևաբար, ինտենսիվ դոթոններն արտադրության առիթ և դրա արդյունավետության բարձրացման գործում պետք է խաղան գնահատվող ու կայուն դեր: Տնտեսավարման ինտենսիվ մեթոդները պետք է ապահովեն կենդանի և առարկայացած աշխատանքի, տեխնիկայի, հումքի ու նյութերի, կապիտալ ներդրումների ծախսումների համեմատությամբ արտադրության վերջնական արդյունքների առաջանցիկ աճ: Զարգացման ալգորիթի ուղին նախատեսում է հետևյալ պայմանները. առաջին՝ արտադրության աճը պետք է տեղի ունենա առանց աշխատավորների թվաքանակի ավելացման և նույնիսկ դրա նվազեցման պայմաններում՝ աշխատանքի արտադրողականության բարձրացման և աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման շնորհիվ: Երկրորդ՝ ֆինանսական ռեսուրսների, հիմնական արտադրական ֆոնդերի ռացիոնալ և խնայողական օգտագործում, հզորությունների օպտիմալ բեռնավածության միջոցով ֆոնդահատույցի բարձրացում, տեխնիկայի հնարավորությունների լրիվ օգտագործում, արտադրության մասնագիտացման, կոոպերացման և կոմբինավորման ռացիոնալ կազմակերպում: Երրորդ՝ էներգատարության և նյութատարության նվազեցման հաշվին նյութական ռեսուրսների ռացիոնալ ու խնայողական օգտագործում, միավոր նյութական ռեսուրսներից պատրաստի արտադրանքի թողարկման աճ, կորուստների կրճատում և թափոնների լրիվ օգտագործում: Զորրորդ՝ արտադրանքի որակի բարձրացում, միավոր վերջնական արդյունքի վրա կատարվող ծախսերի նվազեցման պայմաններում դրա սպառողական հատկությունների բարելավում:

1 Մ. Ս. Գորբաչով, Ընտիր ճառեր և հոդվածներ, Մոսկով, 1986, էջ 100:

Ռեսուրսատնտեսումն արտադրանքի արտադրության պոտենցիալ, լրացուցիչ աղբյուր է, Այն արտահայտվում է թողարկվող արտադրանքի միավորի վրա կատարվող նյութական, աշխատանքային և ֆինանսական ծախսումների նվազմամբ: Դրա շնորհիվ տեղի է ունենում ռեսուրսների ազատում, որոնք ևս կարող են արտադրողական ձևով օգտագործվել ու տալ լրացուցիչ արդյունք: Այսպիսով, ծախսումների տեսակետից ռեսուրսատնտեսումը հանդես է գալիս արտադրանքի ինքնարժեքի նվազեցմամբ, իսկ արդյունքի տեսակետից՝ դրա լրացուցիչ աճով: Ինչպես նշում էր Կ. Մարքսը, ռեսուրսատնտեսումը հանդես է գալիս որպես հատուկ «մեթոդ» նվազագույն ծախսումներով որոշակի արտադրանքների նվաճման համար<sup>2</sup>: Պետք է նշել, որ կատարված ծախսումների և ստացված արդյունքների կոնկրետ հարաբերակցությունը դեռ ոչինչ չի ասում այն մասին, թե ինչ ճանապարհով են դրան հասել: Արդյունավետության այս կամ այն մակարդակին հասնելու ուղիներն ըստ էության կապված են ընդլայնված վերարտադրության էքստենսիվ և ինտենսիվ ձևերի հետ:

Ինտենսիվ վերարտադրության դեպքում արտադրանքի լրացուցիչ աճը տեղի է ունենում ի հաշիվ արդյունավետ արտադրության միջոցների կիրառման, դրանց որակական կատարելագործման ու ռացիոնալ օգտագործման, աշխատավորների ընդհանուր ու մասնագիտական կրթության բարձրացման և այլն: Այդ դեպքում վերը նշված հարաբերակցության համադրումը ստանում է հետևյալ տեսքը՝

- 1) ստացված արդյունք→max, կատարված ծախսեր→min,
- 2) արտադրանքի լրացուցիչ աճը տեղի ունի ոչ թե ռեսուրսների լրացուցիչ ծախսումների, այլ դրանց տնտեսման հաշվին,
- 3) աշխատանքի արտադրողականության աճի հետ մեծանում է հասարակական արտադրության արդյունավետությունը, այսինքն՝

$$\text{Արդ.} = \frac{\text{Ա. Թ.}}{\text{Ա. Մ.}}$$

$$\text{Արտ.} = \frac{\text{Ա. Թ.}}{\text{Ժ.}}, \text{ որտեղ՝}$$

Արդ.—հասարակական արտադրության արդյունավետությունն է,

Ա. Թ.—արտադրանքի թողարկումն է,

Ա. Մ.—կենդանի և առարկայացած աշխատանքային ծախսումներն են,

Արտ.—աշխատանքի արտադրողականությունն է,

Ժ.—ժամանակն է:

Այսպիսով, զարգացման առավելագույն ինտենսիվ ձևին անցնելիս արտադրությունն ապահովում է ռացիոնալ ռեսուրսատնտեսման իրագործումը: Բացի այդ, ռեսուրսատնտեսումը ծագում է նաև որպես ընդլայնված վերարտադրության տնտեսավարման ինտենսիվ ձևի իրագործման արդյունք: Ինտենսիվացումը, ռեսուրսատնտեսումը և արդյունավետությունը փոխներգործելով կազմում են տնտեսական փոխադարձ կապերի կալուն համակարգ, որն ուղղված է արտադրողական ուժերի զարգացման մակարդակի բարձրացմանը: Այդ համակարգում ինտենսիվացումը գտնվում է ամենախոր մակարդակում: Այն բնորոշում է արտադրողական ուժերի զարգացումը և արտադրության պրոցեսում գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների ներդրման միջոցով դրանց որակական կատարելագործումը:

Փոխներգործելով ինտենսիվացման և արդյունավետության հետ, ռեսուրսատնտեսումն ինտենսիվացում—ռեսուրսատնտեսում—արդյունավետություն փոխադարձ կապերի համակարգում գրավում է առաջատար դեր: Միաժամանակ,

<sup>2</sup> К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 25, ч. I, с. 96.

ինտենսիվացման նկատմամբ ռեսուրսատնտեսումը հանդես է գալիս որպես նրա առավել կոնկրետ ձև, քանի որ թողարկվող արտադրանքի միավորի վրա կատարվող ծախսումների քանակական կրճատման հետ անհրաժեշտ է նաև ռեսուրսների բոլոր տեսակների յուրաքանչյուր միավորի առավելագույն օգտագործում, իսկ արդյունավետության նկատմամբ ռեսուրսատնտեսումը հանդես է գալիս որպես ստացված արդյունքների և կատարված ծախսումների համագրման եղանակ:

Ասվածից երևում է, որ ռեսուրսատնտեսումը, ինչպես ցանկացած տնտեսական պրոցես, ունի քանակական և որակական որոշակիություն: Ռեսուրսատնտեսման որակական բնութագիրը ռեսուրսների յուրաքանչյուր միավորի օգտակար հատկությունների լրիվ և ռացիոնալ օգտագործումն է: Այդ պրոցեսը քանակապես արտահայտվում է արտադրության մեջ գիտատեխնիկական առաջադիմության նվաճումների ներդրման շնորհիվ հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի և այլնի տեսակարար ծախսումների նորմաների ու նորմատիվների կրճատմամբ:

Մեր երկրում սոցիալիստական շինարարության ոչ վաղ անցյալում արտադրության զարգացումը տեղի էր ունենում առավելապես ի հաշիվ տնտեսական շրջանառության մեջ հողային նոր հրապարակների ընդգրկման, օգտակար հանածոների նոր հանքավայրերի յուրացման, գործարանների և ֆաբրիկաների կառուցման, որոնք պահանջում էին հսկայական լրացուցիչ ռեսուրսային ծախսումներ: Այդ ժամանակաշրջանում գլխավոր ուղադրությունը ներկրվում էր արտադրության մեջ ընդգրկվող բոլոր ռեսուրսատեսակների ծավալային հնարավորությունների մեծացմանը, որոնք անսահմանափակ էին թվում:

Այժմ, երբ արտադրողական ուժերի քանակական աճը հիմնականում ավարտված է, երկրի տնտեսական զարգացման շահերը ստիպում են այդ պրոցեսին այլ կերպ մոտենալ: Բանն այն է, որ մեր երկրում համաշխարհային լավագույն ցուցանիշների համեմատությամբ ազգային եկամտի միավորի վրա ծախսվում է ավելի շատ հումք և էներգիա: Մեքենաների և սարքավորումների շատ տեսակներ ունեն բարձր նյութատարություն, մեծ են մի շարք արտադրանքների արտադրության համար կատարվող աշխատանքային ծախսումները: Դրանում համոզվելու համար բավական է հիշել, որ ԱՄՆ-ում 1986 թ. ձուլվել է 75 մլն տոննա մետաղ, իսկ ՍՍՀՄ-ում՝ 161 մլն տոննա: Սակայն ԱՄՆ-ում ստացված վերջնական արդյունքը (հաստոցներ, մեքենաներ) 1,5—2 անգամ ավել է, քան մերը<sup>3</sup>: Միաժամանակ մեզանում թույլ են օգտագործվում արտադրության թափոնները և երկրորդային ռեսուրսները: Արտադրության ու պահպանման ժամանակ տեղի են ունենում մետաղի, վառելիքի, ցեմենտի, շինանյութերի, գույքատնտեսական և այլ արտադրանքի զգալի կորուստներ: Այս ամենը վկայում է նույնաքանակ ռեսուրսների պայմաններում վերջնական արտադրանքի արտադրության մեծացման հնարավորությունների մասին:

Մեր հանրապետությունում որոշ ուղադրություն է դարձվում երկրորդային ռեսուրսների օգտագործման հարցերին: ՀՍՀՄ տնտեսական և սոցիալական զարգացման 1986—1990 թթ. պլանում հատուկ բաժին է հատկացվել երկրորդային հումքի օգտագործմանը: Որոշվել է մթերվող մակուլատուրայի, մանածագործական նյութերի, երկրորդային պոլիմերային հումքի, մշակված դողերի, փայտամշակման մնացուկների և վերամշակվող հումքի ծավալը: Երկրորդային հումքի օգտագործման մեծ փորձ է կուտակել երկրորդային հումքի մշակման՝ Հայկական ՍՍՀ պետմատին կից «Հայերկրորդ ռեսուրսներ» արտադրական միավորումը: Դրա ձեռնարկություններում մշակվում են երկրորդային մանվածքային նյութեր, որոնցից ստանում են ոչ գործվածքային կտավ, վերականգնված բուրդ և այլ արտադրանքներ՝ տարեկան ավելի քան մեկ միլիոն ռուբլի արժողությամբ: Բացի այդ, միավորումը յուրաքանչյուր տարի վերամշակման համար Երևանի թղթի տարայի գործարան է հանձնում 18—20 հա-

<sup>3</sup> «Известия», 25. VIII. 1987.

զար տոննա մակուկատուրա, իսկ շինանյութերի արդյունաբերության միևնույն տարածքային ձևերի միջոցով և 23 հազար տոննա ապակու թափոն<sup>4</sup>:

Նրկորդալին ռեսուրսների օգտագործման օրինակ են ցույց տալիս նաև հանրապետության մեքենաշինության, թեթև և սննդի արդյունաբերության ձևերի միջոցով:

Սակայն փնչպես նշված, այնպես էլ այլ ձևերի միջոցով ռեսուրսների և թափոնների օգտագործման աստիճանն անհամեմատ ավելի քարձր կլինի, եթե առավել մեծ ուղղորդված հատկացվեր արտադրության մեջ անթափոն, կիսաթափոն և ռեսուրսային տեխնոլոգիաների ներդրմանը: Ընդ որում, նշված տեխնոլոգիաների կիրառումն ապահովում է միանգամից երկու պրոբլեմի լուծում՝ հումքային ռեսուրսների դեֆիցիտի հաղթահարում և շրջակա միջավայրի պահպանում: Հանրապետության մասշտաբով ներկա պայմաններում երկու պրոբլեմներն էլ պահանջում են անհապաղ լուծում:

Միաժամանակ, հանրապետությունում երկրորդային ռեսուրսների հետ կապված աշխատանքները սահմանափակվում են բնակչությանից թափոնների ավանդական ընդունման ձևերով: Մինչդեռ կարելի է կիրառել Միության մի շարք քաղաքներում ընդունված հատուկ մեթոդներ: Դրանցից է հատուկ մասնազոտային միջոցով միջնորդականների կիրառումը: Երկրորդային հումքի ընդունումը: Համապատասխան հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ երկրորդային հումքի ընդունման այդ մեթոդը 2—3 անգամ արդյունավետ է սովորական մեթոդը կետերի աշխատանքի մեթոդից:

Երկրորդային հումքի ընդունման աշխատանքները հանրապետությունում անբավարար են՝ կապված նաև այն բանի հետ, որ մեր քաղաքներից ու շրջաններից և ոչ մեկում չեն գործում երկրորդային հումքի ընդունման հատուկ խթանիչ խանութներ: Հետազոտությունը ցույց է տալիս, որ նմանատիպ խանութները 5—6 անգամ շատ են ընդունում երկրորդային հումք, քան սովորական ընդունման կետերը<sup>5</sup>:

Այսպիսով, հանրապետությունում առկա են երկրորդային ռեսուրսների օգտագործված ռեզերվներ:

Մեր ժողովրդական տնտեսությունն ապահովել է արտադրության այնպիսի ծավալ, երբ հարկավոր է այն ոչ այնքան ընդլայնել, որքան նորացնել: Պետք է հիշել, որ գնալով սպառում են օգտակար հանածոների և բնական մյուս ռեսուրսների պաշարները: Մասնավորապես, ըստ որոշ հաշվարկների, այլումինը կբավականացնի 570 տարի, երկաթը՝ 250 տարի, ցինկը՝ 23 տարի, արծիճը՝ 19 տարի<sup>6</sup>, Իհարկե բերված տվյալները բացարձակ ճշտության հավանություն չունեն, բայց և այնպես ընդգծում են ռեսուրսների խնայողական օգտագործման կարևորությունը: Բացի այդ, պետք է նշել, որ, գիտականորեն հիմնավորված տվյալներով, ռ1 ռուբլի արժողությամբ հումքի լրացուցիչ արտադրության համար 60-ական թվականների սկզբին ծախսվում էին 2 ռուբլի, 70-ական թվականների սկզբին՝ 3 ռուբլի, իսկ 80-ական թվականների սկզբին՝ գրեթե 4 ռուբլու կապիտալ ներդրումներ: Մոտ ապագայում կպահանջվի 5—6 և ավելի ռուբլի: Դրա հետևանքով արդյունահանող արդյունաբերությունում զբաղված են 40 տոկոսից ավելի կապիտալ ներդրումներ, իսկ նյութական ռեսուրսների արդյունաբերության մեջ զբաղված են հիմնական արտադրական ֆոնդերի մոտավորապես 75 տոկոսը և երկրի աշխատանքային ռեսուրսների ավելի քան 45 տոկոսը<sup>7</sup>: Նման պայմաններում էկոնոմիկայի արագընթաց զարգացումը պլա-

<sup>4</sup> Ա. Ա. Բ ա դ ա յ ա ն, Խնայողարար օգտագործել արտադրական ռեսուրսները, Երևան, 1985, էջ 56:

<sup>5</sup> «Экономия и нормирование материальных ресурсов», М., 1986, с. 207.

<sup>6</sup> А. И. Воронцов, Н. Х. Харитонов, Охрана природы, М., 1977, с. 20.

<sup>7</sup> М. И. Балашевич, В. И. Выборнов, Интенсификация—основной путь повышения эффективности производства, Минск, 1985, с. 11.

նախն հաշվեկշռում կարող է և պետք է տեղի ունենա ի հաշիվ ռեսուրսների տնտեսման, դրանց օգտագործման ռացիոնալացման և ոչ թե, ինչպես նախկինում էր, ծավալային մեծացման: Արտադրության արդյունավետության խոշոր ուղեղերը է թաքնված նաև օգտակար հանածոների յուրացման աստիճանի բարձրացման, դրանց արդյունահանման, տեղափոխման և պահպանման ժամանակ կորստի կրճատման, հումքի կոմպլեքսային և խոր վերամշակման մեջ: Սակայն, ինչպես նշվեց ՍՄԿԿ XXVII համագումարում, մենք դեռևս ինչպես հարկն է ձեռնամուխ չենք եղել էկոնոմիկայի ռեզերվներից շատերի արդյունավետ օգտագործմանը: «Տարբեր մակարդակների ղեկավարների զգալի մասի հոգեբանությունը ձևավորվել է ռեսուրսների առատության պայմաններում,— ասվեց Կենտկոմի քաղաքական զեկուցման մեջ:— Նման հարստությունը շատերին է երես տվել, հանգեցրել վատնողության: Բայց վիճակը վաղուց փոխվել է: Չկա աշխատուժի նախկին հոսքը, մենք սկսել ենք թանկ վճարել յուրաքանչյուր տոննա նավթի, հանքաքարի, ածխի հանույթի և փոխադրման համար: Այս փաստերի առաջ չի կարելի աչք փակել: Դրանց հետ պետք է հաշվի նստել: Եվ տնտեսել ամեն ինչում և ամենուրեք: արտադրությունում և կենցաղում, անտառներ շանցնել վատնողության և անտնտեսվարության կողքով»<sup>8</sup>: Այս ամենն արտացոլված է ՍՍՀՄ տնտեսական ու սոցիալական զարգացման 12-րդ հինգամյակի առաջադրանքներում: Պահանջվում է 1986—1990 թթ. կարևորագույն ռեսուրսների պահանջմունքի աճի 60—65%-ը բավարարել դրանց խնայողության հաշվին: Այդ խնդրի լուծումը հնարավորություն կտա արդեն 1990 թ. ժողովրդական տնտեսության մեջ կրկնապատկել նյութական ծախսումների տնտեսումը<sup>9</sup>:

Ռեսուրսատնտեսման աճող անհրաժեշտության համադրումը դրա իրագործման հնարավորությունների ընդլայնման հետ՝ ռեսուրսատնտեսման բնագավառում տեխնիկական քաղաքականությունը որոշող կարևոր գծերից է: Անհրաժեշտ է ռեսուրսների բոլոր տեսակների տնտեսման հատուկ ընդհանուր և էտական պլանի մշակում, որը կկազմի ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարային պլանների բաղկացուցիչ մասը: Ռեսուրսատնտեսման համար մղվող պայքարի հիմքում պետք է ընկած լինի նոր տեխնոլոգիայի ներդրման միջոցով վերարտադրության պրոցեսի բոլոր փուլերում կորուստների լրիվ վերացման պլանային սկզբունքը:

Ռացիոնալ ռեսուրսատնտեսման իրագործումը պայմանավորված է մի շարք գործոնների գործողության օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթով: Օբյեկտիվ գործոններից են արդյունահանող հումքի լավագույն աղբյուրների սպառման հետևանքով առաջացած հումքի, նյութերի թանկացումը և ավելի ցածրորակ հումքի օգտագործումը, գիտության ու տեխնիկայի զարգացման մակարդակը, որից կախված են ռեսուրսների օգտագործման հնարավորությունները: Շատ դեպքերում ժամանակակից տեխնոլոգիան չի ապահովում երկրի ընդերքից հումքի լրիվ արդյունահանումը, սկզբնական հումքի բոլոր բաղադրամասերի օգտագործումը: Այսպես, օրինակ, օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ ընդհանուր կորուստները կազմում են ընդհանուր ծավալի  $\frac{1}{4}$ -ը, իսկ հումքի վերամշակման ու հարստացման ընթացքում առաջացած թափոնները՝ ամբողջ մասսայի 20—25%-ը: Ընդ որում, սովորաբար օգտագործվում են դրանց 10—30%-ը, և միայն մի քանի տեսակների (մետաղների թափոններ, փայտանյութ) 50—70%-ը<sup>10</sup>:

Քանի որ արտադրության պրոցեսում ռեսուրսների կորուստները ավանդական տեխնոլոգիայի կիրառման հետևանքով անխուսափելի են, դրանք արդեն իսկ նախագծման պրոցեսում նախատեսվում են: Սակայն շատ դեպքեր

<sup>8</sup> «ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը», Երևան, 1986, էջ 59:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 381:

<sup>10</sup> III. Розенфельд, Пути экономии топлива, сырья и материалов («Вопросы экономики», 1982, № 2, с. 32).

րում թափոնների ձևավորման և օգտագործման պրոցեսները մասնատված են ինչպես ժամանակի, այնպես էլ տարածության կտրվածքով: Հաճախ թափոնները տեղափոխվում են մեծ հեռավորությունների վրա գտնվող վերամշակման կենտրոններ, ուստի առավել արդյունավետ է համարվում մոտ տարածությունում թափոնների օգտագործման համար նոր ձեռնարկությունների կառուցումը: Դա պրակտիկայում քիչ է իրագործվում, որի հետևանքով թափոնների մեծ մասը չի վերամշակվում: Երկրորդային ռեսուրսների արդյունավետ օգտագործման համար մեծ նշանակություն ունեցավ 1986 թ. ՄՍՀՄ Մինիստրների խորհրդի ընդունած «Կոոպերատիվի հիման վրա երկրորդային հումքի մթերում և վերամշակում կազմակերպելու մասին» որոշումը<sup>11</sup>: Դրանով անհրաժեշտ է համարվում մի շարք հանրապետություններում, այդ թվում և ՀՍՍՀ-ում, ՄՍՀՄ պետության տարածքային մարմիններին առընթեր ստեղծել կոոպերատիվներ և դրանց գործունեությունը կենտրոնացնել առաջին հերթին բնակչությունից երկրորդային հումքի հավաքման, դրա վերամշակման ու այդ հումքից ժողովրդական սպառման ապրանքների, ինչպես նաև արտադրատեսիլական արտադրանքների թողարկման վրա: Սահմանված է, որ երկրորդային հումքի մթերման և վերամշակման կոոպերատիվները գործեն լրիվ տնտեսաշվարկի, ինքնահոգնման և ինքնաֆինանսավորման սկզբունքով, կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովում ընդունած կանոնադրությանը համապատասխան և իրենց գործունեությունն իրականացնեն պայմանագրերի հիման վրա:

Ռեսուրսատնտեսման իրականացմանը խանգարող սուբյեկտիվ գործոնների թվին են պատկանում նեղ մասնագիտացված բնագավառների, արտադրությունների և ձեռնարկությունների գերատեսչական մոնոպոլիզացիան, արտադրականության բնույթի և ձևերից առաջ մասնագիտացված հիմնական արտադրանքի թողարկման շահերից: Այդ գործոններից է արտադրության կազմակերպման և մատակարարման միջև եղած անհամամասնությունը, որի հաղթահարումը գնալով դառնում է ավելի հրատապ խնդիր՝ կապված տեխնիկայի բարդացման և ճյուղերի ու շրջանների միջև եղած կապերի ողջ համակարգի հետ: Թվարկվող գործոնների շարքն են դասվում նաև մասնագիտացված ձեռնարկությունների նախագծման ժամանակ դրանց ճիշտ տեղաբաշխման նրկատմամբ ոչ բավարար ուղղորդությունը:

Ռեսուրսատնտեսման իրականացմանը խանգարող սուբյեկտիվ գործոն է նաև արտադրության սոցիալիստական եղանակին և նրա նպատակին հակադրվող տնտեսական շահերի դեֆորմացիան: Մեր տնտեսական մեխանիզմում արմատավորվել է այն պրակտիկան, որի պայմաններում ձեռնարկությունը, միավորումը և նույնիսկ ժողովրդական տնտեսության ճյուղերն իրականում շահագրգռված են արտադրանքի թողարկման վրա կատարվող ծախսումների աճով: Այդ շահագրգռվածությունն օբյեկտիվորեն պայմանավորված է այն բանով, որ հենց ծախսերն են ձևավորում համախառն արտադրանքի արժեքի մեծությունը, դրանց ծավալով են գնահատվում ձեռնարկությունների, միավորումների և ճյուղերի աշխատանքների արդյունավետությունը: Տնտեսական մեխանիզմի արդի պայմաններում ձեռնարկությունների և միավորումների փոխադրումը լրիվ տնտեսաշվարկի կնպաստի այն բանին, որ ռեսուրսատնտեսումը դրանց համար դառնա ոչ միայն պետական կարևոր խնդիր, այլև տնտեսական անհրաժեշտություն:

Արտադրության մեջ ներգրված վիթխարի նյութական բարիքներ անընդհատ գտնվում են շարժման մեջ՝ սկզբնական տեխնոլոգիական գործողություններից մինչև արտադրանքի պատրաստման վերջնական պրոցեսը: Այդ պրոցեսն արդյունավետ կառավարելու համար անհրաժեշտ է նախօրոք հաշվել միավոր արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ աշխատանքային ու նյութական ռեսուրսների ծավալը, ինչը խնայողության և տնտեսավարման համար մղվող պայքարի կարևոր պայմաններից է:

<sup>11</sup> «Սովետական Հայաստան», 22. X. 1986.

Առաջատար ձեռնարկությունների բաղմամյա փորձը ցույց է տալիս, որ հաշվառման և վերահսկողության նորմատիվային մեթոդը հնարավորություն է տալիս վերահսկելու արտադրության պրոցեսում նյութական, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և արտադրանքի ինքնարժեքի իջեցումը: Այս մեթոդի կիրառումը թույլ է տալիս հաշվի առնելու ոչ միայն առանձին արտադրանքների գծով կատարվող բոլոր ծախսումները, այլև նորմատիվներից ու ընթացիկ նորմաներից կատարվող շեղումները: Ընդ որում, տեխնոլոգիական ցանկացած շեղում մանրակրկիտ հաշվի է առնվում, բացահայտվում են դրա պատճառները: Դա հնարավորություն է տալիս վերլուծել շեղումների առաջացումը և կանխելու դրանց հնարավորությունն աշխատանքի պրոցեսում: Նորմատիվային մեթոդն օգնում է ոչ միայն բացահայտելու փաստացի ինքնարժեքը և իմանալու նորմատիվից շեղման պատճառը, այլև ժամանակին հետևելու, թե որքանով են արտադրության մեջ գործող նորմատիվները համապատասխանում ճյուղային, ինչքանով են ապահովում արտադրանքի նյութատարության ու աշխատատարության նվազեցման առաջադրանքի կատարումը: Դա տեղի է ունենում միավոր արտադրանքի վրա կատարված ծախսումների և շեղումների պատճառների բացահայտման ու պլանային և նորմատիվային կալկուլյացիայի համադրման միջոցով:

Ռեսուրսների բոլոր տեսակների խնայողությունն ապահովվում է դրանց ծախսումների գիտակցորեն հիմնավորված նորմավորման միջոցով, ինչպես արտադրության, այնպես էլ սպառման ոլորտում: Նորմաներում և նորմատիվներում արտացոլվում են գիտատեխնիկական առաջադիմության բոլոր նվաճումները, առաջավոր փորձը: Ժամանակակից պայմաններում նորմավորման դերն անշեղորեն աճում է՝ կապված հետևյալ գործոնների հետ. ա) արտադրության ինտենսիվացման կուսակցության վարած կուրսի իրականացման անհրաժեշտությունը, հուսալի և առաջավոր նորմատիվների հիման վրա պլանային առաջադրանքների մշակումը. բ) արտադրության ծավալի աճը, որը հասել է վիթխարի մասշտաբների (այդպիսի պայմաններում նյութական ռեսուրսների ծախսումների նորմաների ընդամենը 1% ավելացումը տարեկան կկազմի 7 մլրդ ռուբլի)<sup>12</sup>. գ) սպառման վայրերից հեռու գտնվող հումքի նոր աղբյուրների հետ կապված ծախսումների աճը:

Նորմատիվային և փաստացի ռեսուրսային ծախսումների տարբերությունը հստակ պատկերացում է տալիս ռեսուրսատնտեսման համար մղվող պայքարում յուրաքանչյուր աշխատողի և կոլեկտիվի ներդրման մասին:

Ռեսուրսների օգտագործման նորմատիվային բազայի կազմակերպումը ՀՍՍՀ մեքենայական տրոշ ձեռնարկություններում ու միավորումներում մի շարք պատճառներով չի համապատասխանում գիտական պլանավորման պահանջներին: Ներգործարանային պլանավորման պրակտիկայում բացակայում է նյութական և աշխատանքային ռեսուրսների օգտագործման նորմաների համակարգի ձևավորման կոմպլեքսային մոտեցումը: Նորմաների կիրառումը հաճախ կրում է էմպիրիկ բնույթ, որի հետևանքով ընդունված թրոշումները չեն կարող ձեռնարկություններին նպատակամղել նյութական և աշխատանքային ռեսուրսների խնայողաբար օգտագործման: Հայկական ՍՍՀ արդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում նյութական ռեսուրսների կարևոր տեսակների ծախսումների նորմաների իջեցման պլանային առաջադրանքները չեն կատարում: Դա կապված է ամենից առաջ այն բանի հետ, որ նյութական ռեսուրսների ծախսումների պլանային նորմաների մշակումը և դրանց իջեցման առաջադրանքները հիմնականում հիմնված չեն նախորդ ժամանակահատվածում հաստատված պլանային առաջադրանքները չկատարելու պատճառների բացահայտման ու վերլուծության վրա:

<sup>12</sup> Р. А. Белоусов, В. И. Сенченко, Экономия ресурсов. Опыт передовых коллективов, М., 1985, с. 30.

Ռեսուրսատնտեսումը առավելագույն՝ արդյունք ստանալու նպատակով օգտագործվող ռեսուրսների օգտակար հատկությունների լրիվ և ռացիոնալ օգտագործումն է։ Այսինքն՝ արդյունքը ռեսուրսատնտեսման հետևանք է, իսկ ռեսուրսատնտեսումը՝ դրա ավելացման պայմանն առ հիմքն է։ Այստեղից հետևում է, որ սխալ է «շտախսեցիր» նշանակում է խնայեցիր» սկզբունքը։ Ռեսուրսատնտեսումը ենթադրում է նյութական, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների խելացի ու կազմակերպված ծախսումներ և ոչ թե դրանց ծավալի կրճատում։ Ծախսումների նվազեցման հետևանքով ստացվող արդյունքների մեծացումն և առավել լրիվ օգտագործման հետևանքով ստացվող արդյունքների մեծացման պայմաններում։ Այլ կերպ ասած, ռեսուրսատնտեսումը հանդես է գալիս որպես վերջնական ժողովրդատնտեսական արդյունքների ավելացման համար նյութական, աշխատանքային և ֆինանսական ծախսումների համադրման հատուկ եղանակ։

Հասարակական արտադրության զարգացման որոշակի փուլում արտադրության և շրջանառության մեջ ռեսուրսների հետագա ընդգրկումը սկսում է խոչընդոտել արտադրության տնտեսական աճի հնարավորությունները։ Հասարակության առջև ծառանում է երկկողմանի պրոբլեմ՝ կամ ռեսուրսների նույնաքանակ ծախսումների պայմաններում աճի տեմպերի նվազեցում կամ էլ աճի նախկին տեմպերի պահպանման համար արտադրության և շրջանառության մեջ նոր ռեսուրսների ընդգրկման ավելացում։ Այստեղ անպատճառ պետք է հաշվի առնել նաև այն, որ ռեսուրսատնտեսման հնարավորությունները ևս անսահմանափակ չեն։ Չի կարելի անվերջորեն կրճատել 1 կվտ/ժամ էլեկտրաէներգիայի արտադրության վրա կատարվող վառելիքի ծախսումները կամ էլ 1 քմ բնակարանային շինարարության վրա կատարվող ցեմենտի ծախսը։ Այսինքն, գոյություն ունի և կունենա ռեսուրսատնտեսման սահմանափակություն, քանի դեռ չի փոխվել և կատարելագործվել տեխնիկան և տեխնոլոգիան, արտադրության և սպառման կառուցվածքը։

Ռեսուրսատնտեսման դերի բարձրացման անհրաժեշտության պարզաբանումը և ռեսուրսատնտեսման խնդիրների կոմպլեքսային մշակումը պետք է գրավի սոցիալիստական ընդլայնված վերարտադրության ինտենսիվացման տեսության կենտրոնական տեղերից մեկը։

Հրատապ խնդիր է նաև ռացիոնալ ռեսուրսատնտեսման իրագործման պրոբլեմի ու տնտեսական մեխանիզմի հետագա կատարելագործման ուղիների։ Ուղղությունների մշակման միջև օրգանական կապի ապահովումը։ Դա պայմանավորված է այն բանով, որ միայն տնտեսական մեխանիզմի համապատասխան վերակառուցման միջոցով է հնարավոր բարձր արդյունավետությամբ օգտագործել նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսները, ապահովել գիտատեխնիկական առաջադիմության արագացումը և ողջ էկոնոմիկայի անցումը զարգացման բազմակողմանի ինտենսիվացման ուղու։

Ներկա ժամանակաշրջանում մեր երկրի տնտեսական և սոցիալական առաջադիմությունը չի կարող ապահովվել դեռևս ոչ վաղ անցյալում դրական արդյունք տվող մեթոդներով։ Չպետք է անհարկի տուրք տալ իններցիային, որի հաղթահարման գործում կարևոր և պատասխանատու դեր պետք է կատարի ողջ տնտեսական գիտությունը և, առաջին հերթին, քաղաքատնտեսությունը։ Այն պետք է որակապես նոր մակարդակի բարձրացնի հրատապ պրոբլեմների, այն թվում ռացիոնալ ռեսուրսատնտեսման իրագործման հետ կապված ուսումնասիրությունները։ Պետք է ուղադրությունը կտրուկ ձևով կենտրոնացնել նաև տնտեսական աճի որակի հարցերին, ժողովրդատնտեսական վերջնական արդյունքների զնահատմանը, ստեղծագործորեն մոտենալ վերարտադրության կառուցվածքի և նրա էկոնոմիկայի վերլուծությանը։

Կուսակցության վարած հետևողական և նպատակամղված կուրսը, որն ուղղված է արտադրության ինտենսիվացմանը, դրա արդյունավետության բարձրացմանը և ռացիոնալ ռեսուրսատնտեսման իրագործմանը, թույլ է տալիս առավել լրիվ օգտագործելու սոցիալիզմի տնտեսական զարգացման հնար-

րազմրդյուններն ու անավերջությունները: Դա կնպաստի նաև սոցիալիզմի սոցիալական խնդիրների հաջող լուծմանը և միջազգային ասպարեզում նրա դիրքերի էլ ավելի ամրապնդմանը:

## СОВРЕМЕННОЕ ПОНИМАНИЕ ПРОБЛЕМЫ РЕСУРСОСБЕРЕЖЕНИЯ

АСМИК АЙВАЗЯН

### Р е з ю м е

СССР стал крупнейшей индустриальной державой мира благодаря плановому и, следовательно, экономическому ведению народного хозяйства. Одним из важнейших источников, способствующих дальнейшему развитию нашей экономики, является более эффективное использование всех ресурсов, рациональное ресурсосбережение.

Содержание ресурсосбережения составляют те экономические отношения, которые выражают заботливое и бережное отношение всех членов социалистического общества к природным ресурсам, к социалистической собственности, рациональному использованию материальных и денежных ресурсов. Современные проблемы ресурсосбережения выдвигают необходимость максимальной мобилизации всех наших резервов. Речь идет о преодолении бесхозяйственности, лучшем использовании созданного производственного потенциала, повышении действенности стимулирования труда. Необходимо по-новому оценивать то, что когда средства производства находятся в руках производителей, а все произведенное достается им же, то все члены общества должны быть заинтересованы в ресурсосбережении.